ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2013թ. N_____ -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևանի քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեի հ.64 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Տիգրան Գևորգյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Սիսակյան փողոցի հ.22 շենքի 8-րդ հարկում գտնվող հ.64 երկու սենյականոց բնակարանն անհատույց սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆլեյտահարների խմբի մենակատար-կոնցերտմայստեր, ՀՀ վաստակավոր արտիստ Տիգրան Գևորգյանին:

Արդեն մի քանի տասնյակ տարի է ինչ Տիգրան Գևորգյանի ելույթները գրավում են հայ և միջազգային երաժշտական հասարակության լայն շրջանակների ուշադրությունը: Լինելով մեծ օժտվածությամբ երաժիշտ նա հիանալիորեն տիրապետում է իր գործիքին՝ հանդես գալով տեխնիկական փայլուն պատրաստվածությամբ, ֆլեյտայի բազմազան հնչերանգների խորը իմացությամբ, կատարվող ստեղծագործությունների ոճի և ձևի անթերի ըմբռնմամբ: Երաժիշտը հանդիսանում է մի շարք հայ կոմպոզիտորների՝ ֆլեյտայի համար գրված ստեղծագործությունների առաջին կատարողը: Համագործակցում է արտասահմանյան բազմաթիվ հանրահայտ երաժիշտ կատարողների հետ, կատարում է սիմֆոնիկ երկացանկի բարդագույն մենանվագներ՝ արժանանալով նաև օտարազգի երաժիշտների և հանդիսատեսի բարձր գնահատականին:

Տիգրան Գևորգյանը երաժշտությանն անմնացորդ նվիրված ֆլեյտահար է, արվեստագետների շրջանում բարի համբավ վաստակած արտիստ, Հայաստանի երաժշտական կյանքի բոլոր ասպարեզներին մասնակցություն բերած և թարմ խթաններ հաղորդած մասնագետ է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երաժիշտը իր գործունեությունը ծավալում է Երևան քաղաքում, որտեղ չունի բնակության վայր, ապա ստեղծագործելու համար պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված բնակարանը տրամադրել Տիգրան Գևորգյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**